

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

(10-ը հունիսի 2017թ. Ք. Իջևան)

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության հաստատումը:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
2. ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի հաստատումը:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհուրդների կազմերի հաստատումը :
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի 2016-2017 ուստարվա գործունեության մասին:
/Զեկուցող Ա. Եզանյան/
5. ԵՊՀ ԻՄ-ում կառուցվածքային փոփոխությունների մասին:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
6. Ընթացիկ հարցեր:

6.1. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության հաստատումը» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա տեղեկացրեց, որ ԵՊՀ –ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը քննարկվել և հաստատվել է ԵՊՀ-ի գիտական խորհրդի 2017թ.-ի մայիսի 4-ի նիստում, որը հիմք է ընդունվել ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան իրավական ակտի նախագծի պատրաստման համար: Նա նշեց, որ նախագծի վրա աշխատել են ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը և գիտական քարտուղար Մ. Աթոյանը: Նա նշեց, որ «*ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը*» ղեկավար ձեռնարկը սահմանում է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունը, ուսանողի բեռնվածությունն ըստ կիսամյակների, կառուցամասերի և կրթամասերի, ուսումնական աշխատանքի ձևերի, ծրագրի դասընթացների և կրթական այլ մոդուլների կազմն ու աշխատածավալները՝ արտահայտված ECTS կրեդիտներով: ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը մանրամասն ներկայացրեց առաջարկվող նախագիծը (տես հավելված 1): Նա հավելեց, որ սույն ղեկավար ձեռնարկը ուժի մեջ է մտնելու 2017թ. սեպտեմբերի 1-ից և գործելու է բակալավրի այն

ծրագրերի համար, որոնց ընդունելությունն սկսվում է 2018-2019 ուսումնական տարվանից:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, ԵՊՀ ԻՄ-ի հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Զուրաբյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ներկայացված նախագծին, և առաջարկեցին հաստատել այն համաձայն հավելված 1-ի:

Որոշեցին

Որոշում 24/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. սեպտեմբերի 1-ից և գործում է բակալավրի այն ծրագրերի համար, որոնց ընդունելությունն սկսվում է 2018-2019 ուսումնական տարվանից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի հաստատումը» լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը մանրամասն ներկայացրեց համապատասխան

նախագիծը (տես հավելված 2): Նա մասնավորապես նշեց, որ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ-ում առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները, այն ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն: Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ-ի համապատասխան կարգի և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը համապատասխան:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը: Արտահայտվողները նշեցին, որ առաջարկվող կարգը շատ կարևոր է ուսումնական պրոցեսը առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Որոշեցին

Որոշում 24/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով

ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. սեպտեմբերի 1-ից:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհուրդների կազմերի հաստատումը» հարցի վերաբերյալ լսվեց տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Նա նշեց, որ նախորդ գիտական խորհրդի նիստում հաստատվել են ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի և ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդի կանոնակարգերը, որտեղ հնարավորինս հստակեցված է մեթոդական խորհուրդների գործունեությունը և պատասխանատվության չափը: Նա շեշտեց, որ մեթոդական խորհուրդները պետք է այսուհետ գործեն առավել արդյունավետ, տեսանելի և հաշվետու, այն շատ կարևոր օղակ է հանդիսանում ուսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպման համար: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ տարբեր ֆակուլտետների մեթոդական խորհուրդները պետք է արդյունավետ համագործակցեն միմյանց հետ և մասնաձյուղի մեթոդական խորհրդի հետ, պետք է նաև շատ սերտ համագործակցեն ամբիոնների, կրթական ծրագրերի ղեկավարների, ուսումնամեթոդական վարչության հետ:

Այնուհետև տնօրեն Ս. Ա. Առաքելյանը առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի կազմը հաստատել համաձայն հավելված 3-ի, իսկ ֆակուլտետի ղեկանները ներկայացնեն համապատասխան մեթոդական խորհուրդների կազմերը:

Արտահայտվեցին – ՈԻՄՎ պետ Ա.Յ. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ղեկան Ա. Ներսիսյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան Ն. Խուրավերդյանը,
Էջ 5, 13-ից

Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Հովսեփյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Ա. Մարգարյանը:

Պրոֆեսոր Ա. Ներսիսյանը ներկայացրեց Հումանիտար գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը (տես հավելված 4), և հույս հայտնեց, որ հիշյալ կազմով ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հնարավորություն ունի արդյունավետ աշխատել:

Դոցենտ Ն. Խուդավերդյան ներկայացրեց Տնտեսագիտության ֆակուլտետի մեթոդական խորհուրդի կազմը (տես հավելված 5), և հավելեց, որ այստեղ ընդգրկված են գործից հասկացող պրոֆեսիոնալներ:

Ասիստենտ Կ. Հովսեփյանը ներկայացրեց Բնական գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը (տես հավելված 6):

Դոցենդ Ա. Մարգարյանը ներկայացրեց Կիրառական արվեստի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը, որը անվանում են նաև գեղխորհուրդ (տես հավելված 7):

Որոշեցին

Որոշում 24/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի կազմը համաձայն հավելված 3-ի:

2. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը համաձայն հավելված 4-ի:
3. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը համաձայն հավելված 5-ի:
4. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը համաձայն հավելված 6-ի:
5. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը համաձայն հավելված 7-ի:
6. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի 2016-2017 ուստարվա գործունեության մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՊԿ բաժնի շրջանավարտների և արտաքին շահառուների հետ տարվող աշխատանքների համակարգող Ա. Եգանյանի հաղորդումը (տես հավելված 8):

Արտահայտվեցին – ՌԻՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը և այլոք:

Ելույթ ունեցողները բավարար գնահատեցին կատարված աշխատանքը: Առաջարկեցին որպեսզի կենտրոնը առավել արդյունավետ դարձնի գործուտուների հետ տարվող աշխատանքները, մեր գործատու շրջանավարտների հետ կապը սերտացնելով հնարավորինս օգտագործի նրանց հնարավորությունները:

Որոշեցին

Որոշում 24/4

Էջ 7, 13-ից

1. Ընդունելի գիտություն:

Օրակարգի հինգերորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում կառուցվածքային փոփոխությունների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ -ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրենը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և կազմակերպելու համար անհրաժեշտ է ստեղծել ԵՊՀ ԻՄ-ի կազմում մի նոր բաժին, որը կգրադվի մասնաճյուղի գիտակազմակերպական գործունեությամբ, որի հիմնական խնդիրներն են լինելու.

- ԵՊՀ ԻՄ ստորաբաժանումների գիտահետազոտական աշխատանքների համակարգումը և դրանց առնչվող ընթացակարգերի մշակումը,
- Տեղական և միջազգային նշանակության գիտաժողովների ծրագրման և համակարգման աշխատանքների աջակցության ցուցաբերումը,
- ԵՊՀ ԻՄ գիտահետազոտական և ուսումնագիտական ստորաբաժանումների աշխատանքային պլանների և ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպումը և կատարման վերահսկումը,
- ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներին գիտական ծրագրերի, դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,
- Դրամաշնորհային ծրագրերով գիտական նախագծերի ձևակերպման և ներկայացման աջակցության ցուցաբերումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը,

- ԵՊՀ ԻՄ աշխատողների գիտական աշխատանքների վերաբերյալ նյութերի էլեկտրոնային հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը,
- ԵՊՀ ԻՄ-ում առկա գիտական սարքավորումների գույքագրումը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի աշխատակազմի վերապատրաստման գործունեությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է նաև Անձնակազմի կառավարման բաժինը վերակազմավորել Անձնակազմի կառավարման և վերապատրաստման բաժին:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ի կազմում գիտակազմակերպական բաժին ստեղծելու և Անձնակազմի կառավարման բաժինը Անձնակազմի կառավարման և վերապատրաստման բաժին վերակազմավորելու առաջարկով դիմել ԵՊՀ-ի ռեկտորին:

Արտահայտվեցին – ՈԻՄՎ պետ Ա.Յ. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Ա. Մարգարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ Ա. Ցուցուլյանը:

Ելույթ ունեցողները ևս կարևորեցին վերոհիշյալ խնդիրների համար առանձին բաժնի ստեղծման կարևորությունը և անհրաժեշտությունը, որը հնարավորինս արդյունավետ կգրադվի ԵՊՀ ԻՄ-ի գիտակազմակերպական գործունեությամբ: Նրանք հավանություն տվեցին տնօրենի առաջարկեցին՝ ԵՊՀ-ի ռեկտորին ներկայացնել համապատասխան առաջարկ ԵՊՀ ԻՄ-ի կազմում գիտակազմակերպական բաժին ստեղծելու և Անձնակազմի կառավարման բաժինը Անձնակազմի կառավարման և վերապատրաստման բաժին վերակազմավորելու վերաբերյալ:

Որոշեցին

Որոշում 24/5

Էջ 9, 13-ից

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ-ի կազմում գիտակազմակերպական բաժին ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի առաջարկին:
2. Համապատասխան առաջարկով դիմել ԵՊՀ-ի ռեկտորին:

Որոշում 24/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ-ի անձնակազմի կառավարման բաժինը Անձնակազմի կառավարման և վերապատրաստման բաժին վերակազմավորելու վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի առաջարկին:
2. Համապատասխան առաջարկով դիմել ԵՊՀ ռեկտորին:

Ընթացիկ հարցեր:

6.1 Լսեցին – «ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2017թ. ապրիլի 21-ի թիվ 11 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանը ԵՊՀ ԻՄ-ում 2010թ.-ից անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական հետաքրքրությանը: Այդ ամենի անառարկելի վկայությունը պետք է համարել Վահան Աղաբաբյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքը, որի միջին գնահատականը կազմում է 4.77 բալ:

Վահան Արշակի Աղաբաբյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2013թ., որից հետո նա հրատարակել է 1 մենագրություն, 1

ուսումնամեթոդական աշխատանք, 1 մեթոդական ձեռնարկ և 4 գիտական հոդված:

Նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև տնօրեն Ս. Ա. Առաքելյանը քվեարկության դրեց բ.գ.թ. Վահան Աղաբաբյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

Որոշեցին

Որոշում 24/7

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության

2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Աղաբաբյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Մ.Ս. ԱԹՈՅԱՆ